ՀԱՄԱՖԻՆԱՆՍԱՎՈՐՎԵԼ Է ՄԱԿ-Ի ՓԱԽԱՍՏԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ

UNHCR
The UN Refugee Agency

Co-funded by
European Union
Humanitarian Aid

✓ **Կարևոր է իմանալ,** որ ազդարարման ազդանշանը ազդարարման համակարգով տրվող պայմանական նշան, որը պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների, արտակարգ իրավիճակների հանձնաժողովների, տարհանման հանձնաժողովների, քաղաքացիական պաշտպանության ծառայությունների, շտաբների, կազմավորումների, զորահավաքային մարմինների, ինչպես նաև փրկարար ուժերի ու բնակչության համար հրահանգ է հանդիսանում համապատասխան միջոցառումներ իրականացնելու համար:

✓ **Հիշե՛ք,** որ ազդարարումն իրականացվում է կապի և ազդարարման բոլոր միջոցներով՝ էլեկտրաշչակների և բարձրախոսային սարքերով, հեռուստատեսությամբ, ռադիոհեռարձակմամբ, համացանցային կապով ու հեռախոսակապով, այդ թվում՝ նաև բջջային կապի կարճ հաղորդագրությունների միջոցով (առավելագույնը 15 րոպեի ընթացքում):

112 rescue.mia.gov.am

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՓՐԿԱՐԱՐ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԱԶԴԱՐԱՐՈՒՄ

արտակարգ իրավիճակների առաջացման և պատերազմի հայտարարման դեպքում

ՆԳՆ փրկարար ծառայությունը հորդորում է քաղաքացիներին լինել իրազեկված և պահպանել զգոնություն:

Ի՞ՆՉ Է ԱԶԴԱՐԱՐՈՒՄԸ

ՀՀ տարածքում արտակարգ իրավիճակների առաջացման կամ դրա սպառնալիքի, զինված հարձակման, դրա անմիջական վտանգի առկայության կամ պատերազմ հայտարարելու դեպքում ու ռազմական դրության պայմաններում պետական կառավարման մարմիններին, կազմակերպություններին, բնակչությանն ազդարարման համակարգերով և այլ միջոցներով ազդարարման ազդանշանների, տագնապի կամ հավաքի, հնարավոր վտանգների, ինչպես նաև վարքականոնների և պաշտպանական միջոցառումների անցկացման անհրաժեշտության մասին հրատապ տեղեկատվության տրամադրումն է:

ՈՐՈ՞ՆՔ ԵՆ ԱԶԴԱՐԱՐՄԱՆ ԱԶԴԱՆՇԱՆՆԵՐԸ

- **«Օդային տագնապ»**՝ օդային հարձակման դեպքում:
- **«Ուշադրություն բոլորին»**՝ ԱԻ առաջացման կամ դրա սպառնալիքի, զինված հարձակման և դրա անմիջական վտանգի առկայության, օդային հարձակման ավարտի դեպքերում:

«ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ» ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ՝

- էլեկտրաշչակների միջոցով տրվում է **ընդհատվող** ձայնային ազդանշան՝ 2-3 րոպե տևողությամբ,
- ազդարարման միջոցներով տրվում է կարճ հաղորդագրություն՝

«ՕԴԱՅԻՆ ՏԱԳՆԱՊ»՝ ՊԱՏՍՊԱՐՎԵԼ ՊԱՇՏՊԱՆԱԿԱՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐՈՒՄ:

Օդային տագնապի ավարտի դեպքում տրվում է **չընդհատվող** ազդանշան՝ 2-3 րոպե տևողությամբ:

«ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԲՈԼՈՐԻՆ» ԱԶԴԱՆՇԱՆԻ ԴԵՊՔՈՒՄ

- էլեկտրաշչակների միջոցով տրվում է **չընդհատվող** ձայնային ազդանշան՝ 2-3 րոպե տևողությամբ,
- ազդարարման միջոցներով տրվում է կարճ հաղորդագրություն՝

Հաղորդագրությունը լրացվում է համապատասխան նախադասությամբ, օրինակ՝

- «Քիմիական տագնապ, վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին...»:
- «Աղետալի ջրածածկման վտանգ է սպառնում հետևյալ բնակավայրերին...»:
- «Օդային տագնապի ավարտ: Դուրս գալ պաշտպանական կառույցներից...»: